

## **Հայաստանի ՏՏ ոլորտում անդրազգային կորպորացիաների և սփյուռքի դերակատարումը**

Բարև ձեզ,

Ճիշտն ասած՝ իմ շնորհանդեսի հիմնական նպատակն այն է, որ ես ներկայացնեմ համաշխարհային առաջատար տրանսնացիոնալ կորպորացիայի հաջողությունը, որը պայմանավորված է նաև սփյուռքահայերի կողմից տարբեր տարիներին կատարված ներդրումներով: Այդ պատճառով ես իմ շնորհանդեսը բաժանել եմ մի քանի մասի: Փորձեմ շատ հակիրճ ներկայացնել:

Առաջին հերթին, դուք լավ գիտեք, որ Հայաստանը շատ սահմանափակ հնարավորություններ ունի և՛ մարդկային, և՛, ընդհանրապես, նյութական ռեսուրսների առումով, և դա թույլ է տալիս մեզ ենթադրություններ անել, որ մենք թռիչքային զարգացումների կարիք ունենք: Իմ խորին համոզմամբ, այդ զարգացումները կարող են տեղի ունենալ միայն ու միայնայն այն դեպքում, եթե տեղեկատվական-հեռահաղորդակցային տեխնոլոգիաներն օգտագործվեն տնտեսության տարբեր ճյուղերում:

Հիմա մի քանի ցուցանիշներ կուզենայի բերել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հաջողությունների առումով: Սա միակ ճյուղն է Հայաստանում, որը վերջին տարիներին արձանագրել է 25-30% աճ, և համախառն ներքին արդյունքում բարձր տեխնոլոգիաների տեսակարար կշիռը կազմում է մոտ 4 %, որը համադրելի է շատ զարգացած երկրների հետ: Ոլորտում մոտ 15 հազար որակյալ ինժեներներ են աշխատում, կան մոտ 500 ընկերություններ, և ասեմ, որ վերջին 10-ամյակում որոշակի ձեռքբերումների դինամիկա կա՝ և շրջանառության առումով, և ընկերությունների քանակի ավելացման և որ ամենակարևորն է ինտերնետի ցուցանիշների առումով: Տարիներ առաջ մեզ համար հիմնական խոչընդոտը Հայաստանում տեղեկատվական հեռահաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտում ինտերնետի սակագներն ու որակն են:

Հիմա ուզում եմ մի օրինակ բերել. 2004 թ. Հայաստանում 1գբ արագությամբ ինտերնետի սակագինը կազմում էր մոտ 12 հազար դոլար: Այսօր դա հավասարազոր է 10 դոլարի, այսինքն՝ պատկերացրեք, որ ինտերնետի սակագինը այս տարիների ընթացքում համարյա 500 անգամ նվազել է: Իհարկե, պատճառները շատ են՝ մրցակցություն և այլն, բայց ամենակարևորն այն է, որ ինտերնետի որակն է բարձրացել, որովհետև արդեն մի քանի տարի է՝ մենք ոլորտում ինտերնետի որակից ընդհանրապես չենք դժգոհում, իսկ մեր հիմնական դժգոհությունները ժամանակին ինտերնետն էր: Մի կարևոր ցուցանիշ էլ ասեմ, որ հայերը իսկապես ծայրահեղությունների ժողովուրդ են, որովհետև եթե առաջ ինտերնետի առումով մեզ փնտվում էին մեր օտարերկրյա

գործընկերները, որ ներդրում չեն անում, որովհետև ինտերնետի սակագներն են բարձր, այսօր Հայաստանը աշխարհում համարյա առաջին տեղն է գրավում ինտերնետ ծածկույթի առումով: Եթե Միացյալ Նահանգներում բավական տեղեր կան, որտեղ ինտերնետ չկա, ապա Հայաստանում նման տեղ չկա: Այսինքն՝ ինտերնետ ծածկույթի առումով Հայաստանն աշխարհի առաջատար երկրներից մեկն է, եթե չեմ սխալվում՝ այն առաջին տեղում է: Այս ցուցանիշները ցույց են տալիս, որ մենք իսկապես կարող ենք որոշակի արգելքներ հաղթահարել, որոնք խանգարում եմ մեր զարգացումներին:

Այժմ մի քանի ցուցանիշներ մեր ընկերության վերաբերյալ: Ընկերությունը համաշխարհային առաջատար ընկերություն է միկրոսոսիսեմաների նախագծման ասպարեզում, ունի 15 հազար աշխատակից աշխարհի շուրջ 44 երկրներում, իսկ 2004 թ-ից Հայաստանում է:

Մենք ունենք շուրջ 800 աշխատակից: Այսօր 4-5 համալսարաններում ամբիոններ ենք բացել, կադրեր ենք պատրաստում, ըստ էության մեր թիմը այսօր դասախոսների հետ միասին 1100-ից ավել է, որոնցից 300-ը ուսանողներ են: Դա, կարծում եմ կազմում է, ամբողջ աշխարհում Սինոփսիսի հետազոտող ինժեներների 10 %:

Այս դիագրամայում դուք տեսնում եք այն 4 ընկերությունները, որոնք ձեռք բերեց Սինոփսիսը 2004-2007 թթ.: Դրանք ամերիկյան ընկերություններ էին՝ ստեղծված մեր սփյուռքահայերի կողմից, որոնց գլխամասերը Միացյալ Նահանգներում էին, իսկ խոշոր մասնաճյուղերը՝ Հայաստանում: Մեր Սինոփսիսը, որտեղ որևէ հայկական ներդրում չկա, ձեռք բերեց այս 4 ընկերությունները, և արդյունքում մենք ունենք այն, ինչ ունենք այսօր:

Ասեմ, որ տարածաշրջանային առումով բավական լուրջ ձեռքբերումներ ունենք կրթական համակարգում, որտեղ մեր կրթական ծրագրերը օգտագործում ենք ինչպես արաբական երկրներում, այնպես էլ Հնդկաստանում, Չինաստանում, Ռուսաստանում, և այդ առումով «Սինոփսիս- Արմենիան» Սինոփսիսի համար տարածաշրջանային կենտրոն է հանդիսանում:

Մլայդներում պատկերված են ընկերության մասնաշենքերը, ընդհանուր միջավայրը, որը համապատասխանում է համաշխարհային ամենաբարձր ստանդարտներին:

Նաև ներկայացնեմ մեր ուսումնական ծրագրերը՝ համալսարաններ, որոնց հետ մենք համագործակցում ենք: Հայաստանից ղեկավարում ենք նաև Գյումրիում տեղակայված Մոսկվայի ինժեներատեխնիկական ինստիտուտի մագիստրատուրայի ծրագիրը:

Միացյալ Նահանգների պետքարտուղարն ունի ամենամյա մրցանակ, որը տրվում է Միացյալ Նահանգներից դուրս աշխարհի 12 լավագույն ամերիկյան ընկերություններին:

2010թ. մենք արժանացանք պետքարտուղարի այս մրցանակին, ասեմ որ մինչև այժմ Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներում տեղակայված ամերիկյան ընկերություններից միակն ենք, որ ստացել է այս մրցանակը:

Այժմ նշեմ մեր մրցակցային մի քանի առավելությունները. հիմնականում դա մեր ինժեներների ինտելեկտուալ պոտենցիալն է, բայց ես կուզենայի, որ մենք չգերազանահատենք մեր ինժեներներին՝ ասելով, որ նրանք ամենալավն են, ամենախելացին են, լավ ծրագրավորողներ են, դա այդպես չէ, դա հեքիաթ է իրականում: Հայերն ուրիշ մրցակցային առավելություններ ունեն: Դա նրանց շատ արագ հարմարվելու կարողությունն է: Սփյուռքի պատմությունը նույնպես վկայում է այդ մասին, որ մենք շատ արագ հարմարվում ենք նոր միջավայրին, մեր ինժեներներն էլ շուտ հարմարվում են նոր տեխնոլոգիաներին, որոնք շատ արագ դինամիկ փոխվում են:

Ինչ խոչընդոտներ կան: Հիմնական խոչընդոտը Հայաստանի IT ոլորտում որակյալ կադրերի պակասն է: Այս պահին էլ մեր ընկերությունում մոտ 50 թափուր տեղեր կան, որոնք մենք չենք կարողանում լրացնել, ցավոք սրտի: Նման վիճակ է նաև այլ ընկերություններում, բուհերը չեն կարողանում պատրաստել այնպիսի ուսանողներ, որոնք միանգամից պահանջված կլինեն մասնավոր սեկտորի կողմից: Դա ամենակարևոր խնդիրն է: Կրթական համակարգերում լուրջ բարեփոխումներ են պետք այս առումով:

Երկրորդ խնդիրը գլոբալ շուկայի խնդիրն է, որն ավելի շատ վերաբերում է տեղական կապիտալի վրա հիմնված ընկերություններին: Այժմ ես մի երկու միջոցառումների մասին կասեմ, որոնք մենք նախաձեռնել ենք:

Մենք օգնում ենք կազմակերպել այնպիսի ծրագրեր, որոնք նպաստում են Հայաստանում IT ոլորտի զարգացմանը. դա Նախագահի ամենամյա կրթական պարզներն են, որ տրվում են լավագույն ուսանողներին և աշակերտներին, միայն Հայաստանում անցկացվող միկրոէլեկտրոնիկայի միջազգային օլիմպիադան է, աշխարհի 30 երկրների չեմպիոնությունը վիճարկելու նպատակով ազգային օլիմպիադաների հաղթողների ամենամյա այցելություններն են Հայաստան: Այս տարի ևս հոկտեմբերի վերջին նրանք կգան:

Դրանց թվում է նաև համաշխարհային ներդրումների համար ՀՀ Նախագահի գլոբալ մրցանակը, որն այս տարի 9-րդ անգամն է անցկացվում, որի արդյունքում աշխարհի ամենակարկառուն դեմքերը, IT ոլորտի լեգենդները ամեն տարի գալիս են Հայաստան՝ Նախագահից ստանալու այս մրցանակը:

Այս անգամ հաղթողն արդեն որոշված է, բայց ես, ցավոք սրտի, չեմ կարող նրա անունը տալ, որովհետև այն պաշտոնապես չի հայտարարվել, բայց նոյեմբերի 15-ին տեղի կունենա այդ մրցանակաբաշխության պաշտոնական արարողությունը:

Դպրոցական ծրագիրը դպրոցում՝ Յունիկոմպի, Սինոփսիսի, Վիվասելի և ՀՀ ԿԳՆ հետ համատեղ բացառիկ ծրագիր է ամբողջ աշխարհում, որովհետև մենք միակ երկիրն ենք, որտեղ 11 ավագ դպրոցներում արդեն միկրոէլեկտրոնիկան ծրագրավորումը և հեռահաղորդակցությունը դարձել են պարտադիր առարկաներ: Կարծում ենք որ մինչև 2025թ. ևս մոտ 50 ավագ դպրոցներում մենք կհասնենք այս հաջողությանը: Մա, ըստ էության, շախմատից հետո երկրորդ ֆենոմենն է, որը ներառված է կրթական ծրագրերի պարտադիրի բաղադրիչում:

Շնորհակալություն:

**Հովիկ Մուսայեյան**

«Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ տնօրեն